

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



## ՆՅՈՒԹԵՐ ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԿԱԳՈՒ ԱՐԽԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Վերջին կես դարում Հայաստանի և Սփյուռքի տարբեր բանասերներ մի շարք հրապարակումներ են կատարել 19-րդ դարի հայագիտության խոշոր դեմք Նորայր Բյուզանդացու (1845–1915) գրական անտիպ ժառանգությունից\*։ Ապրած լինելով Ստոկհոլմում՝ բանասերն իր արխիվը և գրադարանը կտակել է «Ֆրեդրիկա Բրեններ շվեդ կանանց բարեգործական միությանը»։ Վերջինս 1922-ի հոկտեմբերին Բյուզանդացու թողոնները վաճառել է Գյոթեբորգի գրադարանին, որտեղ, դժբախտաբար, այս հայագետի մեծարժեք դիվանը քաններկու տարի շարունակ մնացել է բարձիթողի վիճակում։ 1944-ին Օվեդիայի Ուփսալա քաղաքում հաստատված նախկին խորհրդային պետական և կուսակցական գործիչ, քաղաքական վտարանդի, լրագրող Սուրեն Երզնկյան-Լորելլին (1881–1963), պատահաբար տեղեկանալով Բյուզանդացու արխիվի մասին, ծանոթացել է այդ թողոններին և լծվել է դրանք փրկելու գործին։ Նա կարգավորել է Բյուզանդացու արխիվը, ցուցակագրել աշխատությունները։ Դրանք կազմել են 51 անուն տարբեր ծավալի ուսումնասիրություններ՝ 44 թղթապանակներում։ Այնուհետև Երզնկյանի ահագանգով Ամերիկահայ Ազգային խորհուրդը միկրոժապավենների է վերածել Բյուզանդացու ձեռագրերից երկուսը։

Հրապարակվող նամակները, որ պահվում են Հայաստանի ազգային արխիվում, վերաբերում են Բյուզանդացու արխիվը փրկելու և որոշ աշխատություններ միկրոժապավենների վրա նկարահանելու աշխատանքներին։ Առաջինը գրել է հայագետ, Բյուզանդացու վաղեմի ծանոթ Ստեփանոս Մալխասյանը (1857–1947) Հայաստանի ԳԱ նախագահությանը, երկրորդը՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի և ակադեմիկոս քարտուղար Գարեգին Պետրոսյանի նամակն է Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարությանը։ Երրորդը գրել է Սուրեն Երզնկյան-Լորելլին Ամերիկահայ Ազգային խորհրդին, իսկ չորրորդը և հինգերորդը՝ Ամերիկահայ Ազգային խորհրդի նախագահ Եզնիկ Ազնակյանը (Չարլզ Վրթանես)։ Նամակները մեքենագիր են, հայերեն, միայն հինգերորդը թարգմանել ենք անգլերենից։ Նամակների շարադրանքի մեջ միջամտություն չենք կատարել, բառերի երկձևությունները (Բառագիրք և Բառգիրք) և հատուկ անունների գրության ձևերը թողել ենք անփոփոխ (Գետտեբուրգ՝ փոխանակ Գյոթեբորգ, Ուբսալա կամ Ուպսալա՝ փոխանակ Ուփսալա)։

Առանձնահատուկ արժեք է ներկայացնում առաջին նամակը, որը հավանաբար վաստակաշատ բանասեր 90-ամյա Ստեփանոս Մալխասյանի վերջին նամակն է՝ գրված իր մահվան տարին։

Ա. Հ. Բախչեղյան

-1-

### Սովետական Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի նախագահությանը

Մոտ օրերս ես մի նամակ ստացա Օվեդիայից իմ մի վաղեմի ծանոթից՝ որ հետաքրքրական և մանրամասն տեղեկություններ է հաղորդում ականավոր

\* Նորայր Բյուզանդացու մասին մանրամասն տե՛ս մեր «Հայաստան-Ակադեմիա-փիա. պատմամշակութային առնչություններ» գրքում (Եր., 2003, էջ 157-168)։

Մալխասյանը դիտմամբ չի տվել Սուրեն Երզնկյանի անունը, քանի որ վերջինս 1930-ից փախստականի կարգավիճակով էր գտնվում Սկանդինավիայում։

հայագետ Նորայր Բյուզանդացու<sup>2</sup> գրական ժառանգության մասին: Նորայր Բյուզանդացին (Norayr de Byzande<sup>3</sup>) վախճանվել է Վենետիկում 1915 թվին: Նա թողել է մի ինքնագիր կտակ ֆրանսերեն լեզվով 2 հուլիսի 1910 թվի, որով յուր գրական ժառանգությունը, 25 արկղում, կտակել է Ստոկհոլմի մի կանանց ընկերության (շվեդերեն Fredrica Bremer): Կտակի 10-րդ կետում կարգադրում է, որ յուր գրական ժառանգությունը, որ, ի միջի այլոց, պարունակում էր մի հազար օրինակ յուր կազմած ֆրանսերենից հայերեն բառարան, վաճառվի 40.000 ֆրանկով:

Սակայն Կանանց Ընկերությունը խախտել է կտակի այս կետը և ամբողջ գրական ժառանգությունը վաճառել է Գետտեբորգի (Goeteborg) քաղաքային գրադարանին 2000 շվեդական կրոնով: Գրադարանը յուր կողմից բառարանի հազար օրինակն ուղարկել է Կահիրե վաճառելու:

Իմ նամակագիրը երկար և համառ արպատումներ է կատարել իմանալու համար, թե որտեղ է մնացել այդ գրական ժառանգությունը, և իմացել է, որ նա անփույթ կերպով պահվում է Գետտեբորգի գրադարանի նկուղներում և տան կտուրում: Երկար թախանձանքներից հետո հաջողվել է, որ գրադարանը ժամանակավորապես նրան է ուղարկել այս գրադարանները ցուցակագրելու և հաշվի առնելու: Ինքը 3-4 ամիս աշխատելով այնտեղ կազմել է մի ցուցակ բաղկացած 51 անունից և ասում է, որ սա կազմում է հազիվ կեսը կամ մի երրորդը յուր ձեռքի տակ եղած նյութերից:

Ցուցակը պարունակում է բազմաթիվ տպագրված և ձեռագիր աշխատանքներ, խիստ շատ նամակներ, ստուգված և ուղղագրված հրատարակություններ, ի միջի այլոց պարունակում է մի «Բառագիրք ստորին հայերենի, քաղեալ ի մատենագրաց 11-12 դարուց»: Բառարանը բաղկացած է 5 հատորից, 5872 երեսից, (հատոր 1 Ա-Դ, 2-Դ-Լ, 3-Խ-Ն, 4-Օ-Շ, 5-Ռ-Պ):

Ծարունակությունը, 3-ից մինչև վերջը չէ գտնված: Մեր լեզվի այս չմշակված և գրեթե դեռևս անձանոթ այս շրջանի համար այս բառարանը մի հոյակապ գանձ է հայ լեզվի և գրականության համար: Եվ շատ ցանկալի է, որ մեր Գիտությանց Ակադեմիան աշխատի ձեռք բերել Նորայրի ամբողջ գրական ժառանգությունը և այս բառագիրքը:

Սրա համար հարկավոր է գործադրել հետևյալ միջոցներից մեկը.-

1. Ուղղակի դիմել Գետտեբորգի գրադարանի վարիչ Սեթ Հալլբերգին, որ իմ նամակագրին հայտնել է թե պատրաստ է Նորայրի գրական ժառանգությունը

<sup>2</sup> Ինչպես նշվեց, Բյուզանդացին և Մալխասյանը ծանոթ են եղել միմյանց հեռակա կարգով: Ավետիք Աղամյանը հրապարակել է Բյուզանդացուն Մալխասյանի գրած երեք նամակ (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թ. 1, էջ 73-77), իսկ Գոհար Ղազարյանը՝ Մալխասյանի գրած Բյուզանդացու չորս նամակ (տե՛ս «Էջմիածին», 1998, Ձ, էջ 123-132): Բյուզանդացին արժևորել է Մալխասյանի հայագիտական վաստակը, գրել «Ջննություն Մալխասյան հրատարակությանց Ազաթանգեղոսի և Ղազար Փարպեցու» հոդվածը («Յուշարձան» գրական ժողովածու», Վիեննա, 1911, էջ 162-174):

<sup>3</sup> Իրականում պետք է լինի Néandre de Byzance կամ Norayr N. de Byzance:

<sup>4</sup> «Բառգիրք ստորին հայերենի» աշխատության 6-րդ հատորը կորել է: Այս առթիվ Մարտիրոս Մինասյանը տեղեկացնում է. «Վենետիկում կայ լուսապատճենը, Մատենադարանում միկրոֆիլմը, որ նուիրել է Կիլիպենկեան հաստատութիւնը, որը մեզ տեղեկացրեց, թէ Լիզբոնում մանրածապաւեհի ոչ մի օրինակ չի՝ պահել...» (Նորայր Ն. Բյուզանդացի, Նամակներ Վիեննայի Մխիթարեաններից, հրատ. պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Պէյրուս, 1992, էջ 10): Մինասյանը տեղյակ չի եղել, որ Ամերիկահայ ազգային խորհուրդն է նկարահանել տվել այդ աշխատությունները, Հայաստանի Մատենադարանին նվիրելով մեկ օրինակ այդ մանրածապաւեհից՝ մեկ օրինակն էլ պահելով իր արխիվին (տե՛ս հրապարակվող թիվ 4 և 5 նամակները): Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի» աշխատության փրկված հատվածները (767 էջ ընդգրկումով) Մարտիրոս Մինասյանը հրատարակել է 2000-ին, Ժնևում, Վաղուցի Ղուկասյանց եղբայրների հաստատության հովանավորությամբ, սահմանափակ տպաքանակով:

վաճառել 2000 շվեդական կրոնով, կամ դիմել Գեոտեքորգի քաղաքագլխին և քարձրագույն դպրոցի ռեկտորին, ցանկություն հայտնելով զնել այդ գրությունները պայմանների մասին որոշ համաձայնության գալով:

Եվ կամ, ըստ իմ նամակագրի առաջարկության, դիմել Օվեդիայի Արտաքին գործերի Մինիստր Ռանդերսին, որ միաժամանակ պրոֆեսոր է Ուպսալայի համալսարանի, խնդրելով աջակցել, որ Նորայրի այս գրական ժառանգությունն անցնի Գիտությանը Ակադեմիային կամ ձրիաբար կամ գրքերի փոխանակությանը կամ դրամով:

Գրքերի ցուցակն ու կտակի պատճեն (sic) գտնվում են ինձ մոտ:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

13 Ռունվարի 1947 թ.  
Երևան

(Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1 գ, գ. 187, էջ 11-12<sup>5</sup>):

-2-

18. IV. 1947

### ՀԱԹԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԸՆԿ Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Մեզ հասած ստույգ տեղեկությունների համաձայն, 1915 թ. վախճանված Նորայր Բյուզանդացու արխիվը, զետեղված 25 արկղում գտնվում է Գեոտեքորգի գրադարանի նկուղներում: Այդ արխիվը հարուստ է բազմաթիվ անտիպ երկերով, որոնցից հատկապես մեկը՝ «Բառագիրք ստորին հայերենի, քաղեալ ի մատենագրաց 11-12 դարուց» հինգ հատոր, 5872 էջ, հսկայական նշանակություն ունի հայ լեզվի և գրականության համար:

Համաձայն նույն տեղեկությունների, Նորայր Բյուզանդացու արխիվը կարելի է ձեռք բերել, վճարելով Գեոտեքորգի գրադարանին 4000 շվեդական կրոն, որ մեր դրամով կազմում է 5888 ռ. 80 կ.: Ակադեմիան նպատակահարմար է համարում տեղափոխել այդ արխիվը Հայաստան:

Կից ներկայացնելով Նորայր Բյուզանդացու արխիվի ոչ լրիվ ցուցակը և Ստ. Մալխասյանի նամակը այդ արխիվը ձեռք բերելու հնարավորությունների մասին, խնդրում ենք աջակցություն ցույց տալ այդ նյութերը ստանալու գործում:

ՀԱԹԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՊՐԵՋԻԴԵՆՏ,  
ԱԿԱԴԵՄԻԱՑԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ՝

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱԹԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՆԱԽԱԳԱՀ-  
ԳԻՏՆԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

(Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1 գ, գ. 187, էջ 9<sup>6</sup>):

<sup>5</sup> Սույն գործի 13-17 էջերն ընդգրկում են Ս. Երզնկյան-Լորելիի կազմած՝ 51 կետից բաղկացած ցուցակը:

<sup>6</sup> Սույն գործի 10-րդ էջը Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ա. Հովհաննիսյանի գրությունն է՝ ուղղված ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության 5-րդ եվրոպական բաժնի վարիչ Մ. Ս. Վետրովին՝ Բյուզանդացու արխիվի առնչությանը, ինչին ընթացք չի տրվել:

Մեծապատիվ Ամերիկահայ Ազգային Խորհուրդին  
Նյու Յորք

Ստացա Ձեր փետր. 28 նամակը, որի մեջ հաղորդում եք Խորհուրդիդ գեղեցիկ որոշումը՝ միկրո-ֆիլմի առնել տալ Ուպասալայի Համալսարանի Գրադարանին մեր հայտնի բանասեր Նորայր Բյուզանդացիին կարևոր ձեռագիրները։-

1. Բառագիրք ստորին հայերենի ի Մատենագրությանց ԺԱ-ԺԷ դարոց, - Բինգ հատ տետրեր - 5.872 էջ միասին.

2. Տաղարան միջնադարյան Քնարերգության, - երկու տետր 646 էջ միասին:

Ըստ Ձեր հայտնած ցանկության, այդ ձեռագրերի միկրո-ֆիլմերը Ուպասալայի համալս. գրադարանը կ'ուղարկե Հայաստանի Ազգային-Պետական Մատենադարանին - Երևան, իսկ այդ միկրո-ֆիլմից հանված extra copy<sup>7</sup>-ն Ձեզ - Նյու Յորք:

Երեկ Ուպասալայի Համալս. Գրադարանի վարչությունը հաղորդեց ինձ թե ստացած է 265 դուլարը, փոխադրված այդ նպատակով Ձեր կողմից: Ինչպես հաղորդած էի մեծարգո պ. Մ. Թիրյաքյանին\* նախքան Ձեր գրությունների ստացումս, եթե միքրո-ֆիլմն անելը արժե 20 օրե՞ չըը, ապա extra copy-էն միայն 4 օրե էջը: Եվ Ձեր տրամադրած գումարը միանգամայն կը բավի իրականացնելու ամբողջապես Ձեր որոշումը:

Միկրո-ֆիլմն անելը մոտ 6.500 էջերի Ուպասալայում և նրանցից extra copyներ անելը Ստոկհոլմում կը տևի 2-3 ամիս: Ես կաշխատեմ ամեն կերպ, որ մինչև մայիսի 1-ը, - երբ այստեղ դադարում եմ համալսարանական զբաղմունքները և սկսվում է «քննությունների» շրջանը ուսանողության, - Ուպասալայի Համալս. Գրադարանը ուղարկած լինի արդեն միքրո-ֆիլմերը Հայաստանի Ազգ.-Պետ. Մատենադարանին և extra copyները Ձեզ Նյու Յորք:

Թույլ տվեք վերջացնել նամակս ողջունելով Մեծապատիվ Ամերիկահայ Ազգային Խորհուրդիդ կրկնակի հայրենասիրական որոշումը, որը միջոց կըտա նախ՝ մեր հայրենիքի գիտական հաստատություններին, և ապա՝ Ամերիկահայ բանասերներին տրամադրել Նորայրյան կարևոր ձեռագիրները, իրենց անթիվ ուղղումներով ու ցուցումներով, բանասիրական պրպտումների համար:

Խորին հարգանքով՝ Ս. Լորելի  
15. II. (sic) 1951  
Uppsala, Idunagatan 6.

(Հայաստանի ազգային արխիվ, ՊՖ. 426, ց. 1, գ. 905, վավերագիր 1):

Փետրվար 28, 1951  
Գրադարան  
Ուփսալայի համալսարան  
Ուփսալա, Օվեդիա  
Հարգելի պարոն,

Ներփակ ուղարկում եմք 265 դուլարի չեկ՝ Նորայր Բյուզանդացու Բինգ հատորանոց «Բառագիրք ստորին հայերենի» 5272 էջանոց քառարանը և երկհատոր

<sup>7</sup> extra copy (անգլերեն) - լրացուցիչ պատճեն:  
<sup>8</sup> Միհրդատ Թիրյաքյան (1890-?) - ամերիկաբնակ բանասեր, թարգմանիչ:  
<sup>9</sup> օրե (օրն) - շվեդական դրամական մանր միավոր:

«Տաղարան միջնադարյան քնարերգության» 646 էջանոց ձեռագիրը միկրո-  
ժապավենների երկու օրինակների համար: Միկրոժապավենի առաջին օրինակը  
պետք է ուղարկվի Մասենադարան (Հայաստանի Խորհրդային Հանրապետու-  
թյան Ձեռագրերի գրադարան), Երևան, Հայաստան, ԽՍՀՄ: Ձեռագրի երկրորդ օ-  
րինակը պետք է ուղարկվի Նյու Յորքի մեր գրասենյակ (144 East 24<sup>th</sup> Street, N. Y.  
10, New York):

Խնդրանքը կատարվել է պարոն Ա. Լորելլիի (Uppsala, Idunagatan 6,  
Sweden) և պարոն Միհրդատ Թիրյաքյանի (651 West 188<sup>th</sup> Street, N. Y., New  
York, USA) առաջարկով, որոնք միմյանց հետ երկարատև նամակագրություն են  
ունեցել՝ վերոհիշյալ ձեռագրերը Հայաստանի և ԱՄՆ-ի հայ գիտնականներին  
հասանելի դարձնելու նպատակով:

Պարոն Լորելլին հաղորդեց, որ երկու ձեռագրերը միկրոժապավեն դարձնե-  
լը կարժեճա մոտավորապես 200 դոլար: Մենք ստուգեցինք Նյու Յորքի ազգային  
գրադարանում և պարզեցինք, որ միկրոժապավենի լրացուցիչ օրինակն այս երկ-  
րում կարժեճա 65 դոլար: Ենթադրում ենք, որ երկրորդ օրինակների գինը Օվե-  
դիայում նույնքան կլինի, ինչ որ ԱՄՆ-ում, քանի որ մենք պարզել ենք, որ մեկ օ-  
րինակ միկրոֆիլմի նկարահանման գինն այստեղ նույնքան է, ինչ որ ձեր երկրում,  
ըստ պարոն Լորելլիի հաղորդած գնի: Խնդրեմ մեզ տեղեկացրեք, եթե մենք  
սխալվում ենք մեր պատկերացումներում:

Անկեղծորեն ձեր՝  
Զ. Ա. Վրթանես  
Քարտուղար

(Հայաստանի ազգային արխիվ, ՊՖ. 426, ց. 1, գործ 931):

-5-

Հուլիս 30, 1952

Պարոն Ա. Լորելլի,  
Ուքսալա, Օվետո.

Մեծահարգ Տիար:—

Երեկ Ուքսալայի Համալսարանի գրադարանապետ Տր Թեոնեզ Քլեյպըրկ<sup>10</sup>  
նամակով մը մեզ կիմացներ թե Նորայր Բյուզանդացիի «Բառգիրք Ստորին Հա-  
յերենի» և «Տաղարան միջնադարյան քնարերգության» երկերու ձեռագիրներու  
մանրալուսանկարները, որ անցյալ տարի ապսպրած էինք Ձեր և Պրն Միհրդատ  
Թիրյաքյանի ջանքերուն և կոչին ի պատասխան, անցյալ ամսու 13-ին դրկված են  
Ա. Հայաստանի Գիտությանց Ակադեմիային (sic): Ծաբադ (sic) մը առաջ արդեն  
նույն մանրալուսանկարներու փագիթիլ<sup>11</sup> մեր օրինակը ապահով մեզ հասավ, և  
Պրն Թիրյաքյան և ես անձկությամբ և թրթռանքով հաճույքը ունեցանք ծրարները  
բանալու և մանրանկարները քննելու:

Երագիր ունինք մոտավոր ապագային Հայագիտական գրադարան մը  
հաստատել քաղաքիս մեջ, ուր Նորայր Բյուզանդացիի այս երկու արժեքավոր  
գործերը փայլուն տեղ պիտի գրավեն: Ի սրտե կը գնահատենք Ձեր եզակի դերը

<sup>10</sup> Թեոնեզ Քլեյպըրկ (պիտի լինի Թյոննես Քլեբերգ, Tönnnes Kleberg, 1904–1984),  
1946–1966 թթ. եղել է Ուփսալայի համալսարանի գրադարանի տնօրենը: Քլեբերգի և  
Չարլզ Վրթանես-Եզնիկ Ազնակյանի թղթակցությունը տե՛ս Հայաստանի ազգային ար-  
խիվ, ՊՖ. 426, ց. 1, գ. 931:

<sup>11</sup> Փագիթիլ (անգլերեն positive)– այստեղ՝ լուսանկարչական պոզիտիվ:

կատարված աշխատանքներուն մեջ, և կը հավատանք թէ Ամերիկահայությունը և թե մայր հայրենիքի գիտնականներն ու հասարակությունը նույնը պիտի ընեն, երբ մոտ օրեն եղած աշխատանքին պատմությունը մամուլին հանձնենք հաղորդագրության մը միջոցով:

Ընդունեցեք մեր անկեղծ շնորհակալությունները:

Խորին հարգանք,  
Եզնիկ Ազնակյան  
քարտուղար

(Հայաստանի ազգային արխիվ, ՊՖ. 426, ց. 1, գ. 905, վավերագիր 2):

**А. Г. БАХЧИНЯН - Материалы об архиве Норайра Бюзандаци.** - Публикуемые четыре письма дают представление об усилиях армянской интеллигенции, направленных на перевоз в Армению в виде микрофильмов архива крупного арменоведа Норайра Бюзандаци (1845—1915). Архив находится в библиотеке университета Гетебурга (Швеция). Проживающий в Швеции журналист, публицист Сурен Ерзнкян-Лорелли вовлек в это дело Национальный Совет Американских Армян и академика Степаноса Малхасянца, а последний - президиум Академии Наук Армении. Этот Совет финансировал снятие двух серьезных исследований Бюзандаци на микроплёнку. Были сделаны две копии, подаренные Матенадарану и Национальному Совету Американских Армян.